1. Բոլոր նրանց, ովքեր 01.02.2017թ.-ից մինչև 31.03.2017թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում «MaxPlay» առաջարկի շրջանակներում կբաժանորդագրվեն «Տրիո» ծառայությունների փաթեթին 1 տարի բաժանորդագրության պայմանով, ի լրումն իրենց սակագնային փաթեթով սահմանված հիմնական պայմանների՝

ա. Տրամադրվում է տվյալ սակագնով սահմանված հիմնական արագության համեմատ 2.5 անգամ ավելի բարձր արագություն ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա ընթացքում[1],

բ. Տրամադրվում է «Հատուկ 30» («Տրիո Մարզային» սակագնային փաթեթի դեպքում) և «Հատուկ 55» («Տրիո» ծառայությունների փաթեթի բոլոր սակագնային փաթեթների դեպքում, բացառությամբ «Տրիո Մարզային» սակագնային փաթեթի) թեմատիկ փաթեթներն առանց վճարի գանձման ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա[2] ընթացքում,

գ. Տրամադրվում է «Կինոդիտում 100» ֆիլմերի փաթեթն առանց վճարի գանձման[3]

2. Եթե Բաժանորդը սույն պայմանների կետ 1-ում սահմանված կարգով միանում է «Տրիո» ծառայությունների փաթեթին և ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա (365 օրացուցային օրվա) ընթացքում պայմաններով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցնում է ծառայությունների մատուցումը կամ ծառայությունների մատուցումը կասեցվում է

---

[1] Եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից և միանում է «Տրիո» ծառայությունների փաթեթին սույն պայմանների կետ 1-ում սահմանված ժամանակահատվածում, ապա 2.5 անգամ բազմապատկվում է տվյալ սակագնային փաթեթի հիմնական պայմաններով սահմանված Ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության շրջանակներում տրամադրվող արագությունը գումարվում է սույն պայմաններով սահմանված պայմանների շրջանակներում 2.5 անգամ բազմապատկված արագությանը: Բաժանորդի Ինտերնետի արագությունը, որը ձևավորվում է իր սակագնային փաթեթով սահմանված հիմնական արագության, սույն պայմանների շրջանակներում տրամադրված հավելյալ արագության ու ձեռք բերված «Հավելյալ արագություն» ծառայությամբ տրամադրված արագության հանրագումարով, չի կարող լինել ավելի, քան 100 Մբ/վ:

[2] Ծառայությունների ակտիվացման պահից սկսած՝ 1 տարվա (365 օրացուցային օրվա) ժամկետի ավարտից հետո Բաժանորդը շարունակում է օգտվել «Հատուկ 30» կամ «Հատուկ 55» թեմատիկ փաթեթից՝ վճարելով դրանց համար սահմանված ամսավճարը մինչև իր նախաձեռնությամբ «Հատուկ 30» կամ «Հատուկ 55» թեմատիկ փաթեթների ապաակտիվացումը:

[3] Սույն պայմանների շրջանակում Բաժանորդը հնարավորություն է ստանում իր սակագնային փաթեթով սահմանված ծառայությունների ակտիվացման պահից սկսած 30 օրվա ընթացքում (ներառյալ ծառայության հնարավոր կասեցման ժամանակահատվածը) 1 անգամ ակտիվացնել «Կինոդիտում 100» ֆիլմերի փաթեթը առանց վճարի գանձման: Սույն կետում նշված ժամանակահատվածից հետո «Կինոդիտում 100» ֆիլմերի փաթեթն ակտիվացնելու դեպքում Բաժանորդը վճարում է «Կինոդիտում 100» ֆիլմերի փաթեթի համար սահմանված վճարը: Եթե Բաժանորդը ակտիվացնում է «Կինոդիտում» ֆիլմերի փաթեթներից որևէ մեկը ՕԹիԹի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ դիտելու տվյալ ֆիլմերի փաթեթը ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո: Եթե Բաժանորդը ակտիվացնում է «Կինոդիտում» ֆիլմերի փաթեթներից որևէ մեկը ԱյՓի ԹիՎի հաշվի ներքո, ապա հնարավորություն չի ունենում՝ դիտելու տվյալ ֆիլմերի փաթեթը ՕԹիԹի հաշվի ներքո:

վճարումների ուշացման պատճառով, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում սույն պայմանների կետ 1-ի ա. և բ. ենթակետերում նշված կարգով տրամադրվող Ինտերնետի հավելյալ արագության, ինչպես նաև «Հատուկ 30» և «Հատուկ 55» թեմատիկ փաթեթների՝ առանց վճարի զանձման տրամադրման ժամկետը չի երկարաձգվում ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

3. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ գործող Բաժանորդը կարող է միանալ սույն պայմաններին՝ դադարեցնելով գործող ծառայություններն ու 1 տարի բաժանորդագրության պայմանով միանալով «Տրիո» ծառայությունների փաթեթին սույն պայմանի կետ 1-ում նշված ժամանակահատվածում:

4. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

5. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: